

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ  
СЕКТОР ИСТОРИИ АРМ. МЕДИЦИНЫ И БИОЛ. АН АРМ. ССР

Աշխատություններ

№ 1, 1948

Труды

Հ. Հ. ԱԵՊԵՏՅԱՅԱՆ

ՀԱՅ ԲԺՇԿԱՐԱԾՆԵՐՈՒՄ ՀԻՇԱՏԱԿԱՎՈՒՄ ԲՈՒՅՍԵՐԻ Վ ԽՃԵԼԻ  
ԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԽՆԴԻԲՆԵՐԻ ՇՈՒՐԳՔ

Մեր բժշկաբաններն ուսումնասիրող բժիշկների և բիոլոգների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում հին ֆիտոթերապիան, որը պարունակում է բույսերի բազմաթիվ արարերն տերմիններ՝ հաճախ հոմանիշ ունենալով հայերեն և աղավաղված հունարեն անուններ,

Այս անունները, ինչ լեզուներով էլ լինեն, անցած լինելով դարերի պատմության րովով, այսօր մեծ մասամբ անհասկանալի են և այդ իսկ պատճառով մեր նոր բանասերների մեջ պահանջ է զգացվել ստուգման ենթարկելու դրանք: Այդ հարցով զբաղվել են նախասովհետական շրջանի գիտնականները, գլխավորապես մատենադարաններում կատարվող հետազոտական աշխատանքներին զուգընթաց և միաժամանակ բույսերի իրական կյանքից կարված բանասիրական մեթոդով ու այդ պատճառով էլ այդ փորձերի արդյունքը եղել է ոչ միշտ ճիշտ, հաճախ ենթագրական կամ բոլորովին սխալ: Այս պակասը լրացնելու համար աներկրա միջոց պետք է համարել, ըստ իս, գիտահետազոտական կամ էքսպերիմենտալ աշխատանքը: Այսպիսի աշխատանք նախասովհետական շրջանում հնարավոր չէր կատարել. Մենք այժմ ունենք օժանդակ ինստիտուտներ, Բուսաբանական այգի, բուսաբանական գիտարշավեր մեր հարազատ հայրենիքում, պատկառելի թվով բուսաբաններ և բանասերներ: Արդեն երեք տարի է, ինչ սկսվել է հին դեղաբույսերի անունների ստուգման աշխատանքը: Այդ աշխատանքը հաջողաբար զարգանում է Բուսաբանական այդուն յութական օժանդակությամբ, չնորիշիվ Բժշկական ինստիտուտի և Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի:

Անորոշ բույսերի անունների ճշգումը կամ սխալ մեկնաբանությունների ստուգման մենք սկսել ենք կատարել շնորհիվ

ա) մեր անձնական փորձի, որը Հայաստանի ֆլորան ուսումնական և գեղազույսերի մշակությամբ զբաղվելու տասնյակ տարիների արդյունք է.

բ) ժողովրդական բժշկությունը ուսումնասիրելու, մասնաւորապես բժշկարաններին հետևող հեքիմների գործունեությունը քննող հատուկ էքսպերիցիաների:

գ) այն գպարցական կրթությանը, որը սովորեցրել է մեզ բույսերի և բժշկական տերմինների արարերեն անունները, լատիներեն և ֆրանսերեն տերմիններին առընթեր.

դ) մեր հարուստ Մատենադարանի, որտեղ լիուլի կարելի է վերլուծել հայ, արար և պարսիկ բժշկարանների յուրաքանչյուր բառ, մասնավորապես Ամիրտովլաթի «Անդիտաց անպէտում», ուր հեղինակը բույսի նկարագրությունը տալիս է պարզ և անսեթեթ, հոգ չէ, թե երբեմն էլ անկապ ու ցրված:

### Ա Ֆ Ի Ո Ւ

Ապարդյուն փորձնը են եղել ստուգելու համար աֆինոս կամ աֆիոս կոչված բույսը, որը ցուցակագրում է Ամիրտովլաթը «Անդիտաց անպէտում»: Պետք է նաև պարզել կո՞մ արդյոք նման հնչճամբ բույս երկրագնդի ֆլորայում, որովհետև աֆինոս կամ աֆիոս իր բառական կազմով նմանվում է հունարենի: Ճենք փնտուելով գտանք Apios tuberosa ամերիկյան մի բույս, որը սակայն իր էությամբ ոչ միայն հակասում է Ամիրտովլաթի ցուցմունքներին, այլև անհամատեղիլի է նաև այն պատճառվով, որ հայտնաբերվել է Ամերիկայի գյուտից հետո, այսինքն՝ շատ ավելի ուշ, քան գրվել է «Անդիտաց անպէտը»:

Մեր ստուգումները ներկայացնում ենք հետեւյալ էքսպերիմենտներով և ժողովրդի մեջ առկա տրադիցիոն փաստերով.

ա) 1938 թվին Լոռվահայ Գյառջյան գյուղի անտառում մի գյուղական վիրաբույժ հավաքում էր ինչ որ պալարարմատներ: Իմ հարցին նա պատասխանեց, թե հավաքած արմատը թանկարժեք բան է և պիտի ուղարկի Թբիլիսի մի ոմն գեղավաճառի: Ես այդ բույսը ցույց տվի Ա. Բ. Շելկովնիկովին, որը կնքեց այն Euphorbia Condylocarpa անունով: Սակայն բույսի ժողովրդական անունը մնաց ինձ անհայտ:

բ) 1944 թվի հուլիս ամսին Ղուկասյանի Փոքը Սաբյար գյուղի մոտ, մեր էքսպերիցիոն աշխատանքի միջոցին, գյուղի բուժակը ծանոթացրեց մի «հրաշալի» արմատի հետ, որը հայտ-

Նի է նաև կենինտեկանի շրջանում և կոչվում է «Դալի փոքրություն» Այս բույսը նույնն էր, ինչ որ տեսել էր Դյառդյառում:

Համեմատենք այժմ Ամերտովլաթի ցուցումների հետ.

Ամերտովլաթը զրում է

Առկա փաստերը ասում են

Աֆիոս, որ է թուրթերեն պուրչալախն

Իրոք հին թուրքերեն գաղարի անունը պուրչալախ է. այդ անունով մինչև հիմա կոչում են լենինականցիները, մի փոքր փոխված (փուրչուլուխ). բայց երբ հերթը գալիս է գեղարույսին, վերջինիս ասում են «Դալի փուրչուլուխ», այսինքն՝ ոչ իսկականը:

Հայերեն կաղընչնա այլ կու ասեն

Ըստ այժմյան գավառաբարբառի կաղընչնանը Եսրիօնիան է, երեանցիների իշուլ կարուկը, ոռուների մալաշյը. կաղընչան անունը կաբառագրքերում ե' ակնցիների և' արաբկիրցիների մեջ. հիշում է նույնպես նզնիկ կողբացին:

Կանանչ տերեւ ունի, նժան Սաղապին Մանտրկիկ միրդ ունի

Բավական նմանություն ունի սաղապին, այսինքն՝ Ruta-ի տերեսին:

Ճիշտ է, մանր սերմեր ունի, (Ամերտովլաթը արաբերեն ներմ բառը միշտ հայցնում է միրդ բառով):

Տակն որպես տանձի կերպ է Դուրսի կեղեն սե կուլինի մեջն սպիտակ կրութինի

Իինուա են տանձի ձև և թե փուրչուլութի ձև:

Թէ զկիսեն ի վերն ուտեն՝ սաֆրա և պալղամ փսխեցնել տայ, թէ զկիսեն վարն ուտեն՝ լուծումն առնէ և թէ զամենն ուտեն անարատ լուծէ և փսխեցնէ խիստ:

Ըստ սարյարցիների, եթե հողի երեսի մոտի մասից ուտեն փսխել կտա, եթե ներքեկի մասը ուտեն, թե կփըսնեցնի և թե լուծել կտա:

Ըստ լենինականցիների՝ նույնն է բառացի, ինչ որ ասում է Ամերտովլաթը:

«Անգիտաց անպէտի» խմբագիր կ. Բասմաջյանը աֆիուը  
լծորդում է Փրանսերեն Raifort բառի հետ. Բասմաջյանը ինչ-  
պես ամեն մի կետում, հետևել է Իպն էլ թեյթարի Փրանսիացի  
թարգմանիչ L. Leclerc-ին. Raifort (լատիներեն Armoracia  
rustica) այն կծու բողկահամ արմատն է, որը ոռւսները կոչում  
են խրեն, որը բոլորովին այլ բան է և հասկանալի է ամեն  
մարդու կողմից. Նման թարգմանությունը իսպառ մերժելի է:  
Աներկբայորեն ափիօսը Euphorbia Condylocarpa է. Վերջինիս  
կոչման հեղինակն է Մարշալ ֆոն Բիբերշտայնը:

### Ա Կ Ր Ա Կ Ա Ր Ա

Ակրակարա, արաբերեն մաքուր արտասանությամբ Ակիրի  
կարճա, այժմ գրոգիստական անունով կոչվում է պիրետր (Pyret-  
հիմ). բուսաբանական անունն է Pyrethrum anasyclus. Հյուսի-  
սային Աֆրիկային հատուկ յավշանի պես բազմամյա մի բույս է,  
գործածելի է գրգռիչ հատկություն ունեցող արմատը: Պիրետր  
անունը մեծ սխալի մեջ է գցել մեր բառագրողներին, անգամ  
բուսաբան Գ. Մենեխշյանին, որը նույնացնում է այն՝ մեր  
լվածաղկի հետ (Pyrethrum roseum կամ րու. carneum). Այս  
նույնացումը ոչ միայն սխալ է բուսաբանական տեսակետաց,  
այլև պատմականորեն: Հայտառանի գեղեցիկ ծաղկավոր պիրետ-  
րի անունը Եվրոպայում լսվեց 1812 թվին, շնորհիվ Սումբատով  
ազգանունով մի հայի, որը Փարիզի շուկայում վաճառեց քու-  
գեթե persan անունով և հավանորեն սրանից է առաջացել պե-  
րսիդսկի poroshok ոռւսերեն անունը:

### Բ Ա Ր Զ Ո Ւ Ե Ն Ի Կ

Բարձուենիկը, որին Ամիրատովլաթը միացնում է արաբերեն  
Ղայսում հումանիշը, Բասմաջյանը և ուրիշները Փրանսերեն թարգ-  
մանում են Artemise, որը լատիներեն Artemisia Vulgaris-ն է:  
Այս սխալ թարգմանությունը հետևանք է Ամիրատովլաթի և ավե-  
լի հիների՝ բույսի ոչ լրիվ նկարագրության: Այս անորոշու-  
թյունը վերացնում է Ենմսեղդին Սամիի Փրանս-թուրք բառա-  
բանը, որը Achillée-ի դիմաց դնում է Կայսում արաբերեն բառը:  
Թերևս վերապահությամբ ընդունեինք Սամի Բեյի թարգմանու-  
թյունը, եթե կորիում լսած չլինենք Achillea millefolium-ին

մատնացույց եղած բարձմանուկ խոտը՝ Ամիբառվլաթը ավելաց-  
նում է, որ բացունիկը ունի երկու ցեղ, առաջինը սպիտակ է  
(ուզում է ասել սպիտակածաղիկ է), ես այն հասկանում եմ  
Achillea millefolium, կամ նրա խիստ նման Achillea Setacea,  
Կրկրորդը դեղին է, ես այն հասկանում եմ Achillea micrathena:  
Բարձմանուկը ընդունված ժողովրդական գեղաբույս է, իսկ Artemis-  
isia vulgaris-ը՝ ոչ երկու բարձմանուկները աղբբեջանական  
ժողովրդին ծանոթ են աղ օյմադարան և սարք օյմադարան  
անուններով:

### Բ Ե Վ Ե Կ Ն

Ամիբառվլաթ բեկեկն բառին հոմանիշներ բերում է արա-  
բերեն Բուդմ և Թուրքերեն Մանանկազ անունները: Բնկեկն՝ մեր  
բոլոր բանասերները ֆրանսերեն թարգմանում են Terebenthie:  
Այս որոշման մեջ սիալը փոքր է, թյուրքիացություն, որ առա-  
ջացել է բուսաբանության սիստեմատիկային ուշադրություն  
չղարձնելույց:

Ամիբառվլաթի ասած բեկեկնը Pistacia mutica-ն է, իսկ  
սիսալ որոշված Terebenthie-ն՝ Pistacia Terebinthus, նույն ըն-  
տանիքի ծառեր են: Առաջնի ծառից թորվածը կակուղ է, մաս-  
տակ չի լինում, իսկ Pist. mutica-ի թորվածքից մեզ մոտ մաս-  
տակ (ծամոն) է պատրաստվում: Pist. mutica-ի պտուղները գեռ  
չհասած վիճակում թթու են բռնում, բուդմ անվան տակ (անս  
Սրվանձտյանց, Մանանա, էջ 162, և իմ՝ «Ուսելի վայրի բույսե-  
րը»): Մանակող անունը գոյություն ունի մալաթիացիների մեջ:  
Մենենցիքի խեժը (Gummi resina), կամ մաստակը (Մենենցիք սա-  
քը), գործադրում են մահլամ պատրաստելու համար: Փարի-  
զարնակ բժ. Հ. Արթինյանը, որը պիտի հանդիսանար ամենից  
նոր ուղղագրողը, բոլորովին հեռանում է ճշմարտությունից,  
հայտնելով, որ կ. Պոլսում նրան Զեկլեմբիկ են ասում: այսինչ  
սա ուրիշ է և մի հակա ծառ է, բուսաբաններին հայտնի Celtis  
անունով: Հայտառանում անվանում են պաշնի, պտուղը՝ պիշ կամ  
փոփշ, աղբբեջանցիները՝ Դաղպաղան, Փրանսիացիները՝ micocoulier:

### Գ Ա Ն Զ Ր Ա Կ Կ Ա Մ Մ Դ Ո Ւ Տ Ը Ո Ւ Մ

Ամիբառվլաթը Ղարտում և Ասփուր անունների տակ գրան-  
ցում է միտոյա մի բույսի սերմը: Ղուրառումը իր հնչմամբ մո-

սիկէ Cartham-ին. Շեմսեդդիխն Սամին և Բասմաջյանն ընդունում  
 են, որ հենց Ասփուրն է: Իսկ Գանջրակ անունը, որը գործ է  
 ածվում այժմ Ղուրղումի կամ Ասփուրի փոխարեն, անորոշողեն  
 հիշված լինելով Ամիրառվլտթի գրքերում, տեղիք է տվել հակա-  
 ռակ մեկնաբանությունների, օրինակ՝ Թաջունին, Եփրիկյանը,  
 Լուսինյանը, Տեմիրճիբաշյանը Գանջրակը (Ղուրտումը) լծորդում  
 են ֆրանսերեն Colza բույսի հետ, վերջինս ըստ ֆրանսիացի  
 բուսաբանների Brassica Napus Var. oleifera-ն է, միաժամանակ  
 խոտաբույսը, որը ծանոթ է Զանգեզուրում ելանակի  
 անունով, իսկ Ղուրտում կամ Ասփուրը ծանոթ է զանջրակի ան-  
 վան տակ վանեցիներին, պարսկահայերին և մեր Դարաւաչյաղի  
 բնակիչներին: Ո՞վ չի տեսել Գանջրակի ոսկեփայլ, գեղեցկատե-  
 սիլ ծաղիկները, ամեն մի տան պարտեզի բորդյուրներում, երբ  
 ամառը մարդ անց է կենում Միկոյանի շրջանի գյուղերի փողոց-  
 ներով, ոչ միայն հաճելի է այդ դիտելը, այլև ախորժելի է նրա  
 սերմերից պատրաստված առողջարար կաթնահամ ապուրը: Այս  
 սովորությունը չունեն Երևանի բնակիչները, բայց միայն գործ  
 են ածում նրա ներկատու ծաղիկները գաթայի թխվածքի վրա, և  
 դրանից ենելով գանջրակը կոչում են գարայի ծաղիկ: Մեկ խոս-  
 քով՝ գանջրակը իր հոմանիշներով վերցրած այլ բույս է, Colza-ն՝  
 այլ բույս:

### ԵԶԱՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԹՈՐԹ.

Հարկավոր է, նախ, զգուշացնել, որ այստեղ Նզան լեզու  
 ստեղով չպետք է հասկանալ այժմյան հասկացողությամբ «եղան  
 լեզու», որը՝ Plantago-ն է, ոուսերեն Պոծորոշիկ-ը: Հին  
 բժշկաբաններում հիշատակված Նզան լեզուն բառացի թարգմա-  
 նությունն է արաբերեն Լիսանը սկը անունի, նույնպես հունարեն  
 ստուգաբաննությամբ Փրտնսերեն Buglossa-ի եթե բժախընդ-  
 րություն չանենք, այս թարգմանությունների մեջ մեծ սիսաներ  
 չկան: Միայն մի կետում պարզ չէ թորթ բառի թարգմանու-  
 թյունը, որը հիշում է Հերացին, իր «Զերմանց միսիթարության»  
 մեջ: Մեր Մատենադարանի ձեռագրերի մեջ գտնվում է մի բա-  
 ռացուցակ «Բառք Գաղիանոսի» վերնագրով, որի այլուրենական  
 կարգում ցուցակագրված է Թորթ բառը և գիմացը «Անթրաքնե».  
 սա մի հին սխալ պիտի նկատել որովհետեւ վաղուց հայտնի է  
 դարձած, որ Առցանու-ն Հիպատկատի, Թեոփրաստի, Դիոս-  
 կորիտի ժամանակները փրփրեմին (տանդուռ=portulac) ասելիս

հն եղել. (համեմատեել՝ Prof. Bois. Plantes alimentaires, էջ 66):  
 Մենք այս շփոթությունը կարողացանք վերացնել հետեւյալ կեն-  
 դանի վկայություններով. սասունցիները, մշեցիները և սերաս-  
 տիացիները թորթ կամ թորթիկ անունով ինձ ցույց էին տալիս  
*Anchusa Italica*-ն, ուրիշ զեպքերում՝ *Sympphytum aspera*-ն,  
 Նրանք իրավունք ունեն շփոթելու այս երկու բռյաները, որովհետեւ,  
 պատկանելով միևնույն բորբագղի ընտանիքին, առաջին հա-  
 յացքից չեն զանազանվում իրարից, երկուսն էլ ունեն նույն  
 մեծության, գույնի և ձերի ծաղիկները, նույն կոչու տերեները և  
 նույն օրգանովագոտիկ հատկությունները (համ, լորձայնություն  
 և այլն). բայց եղան փորձված մարդիկ, որոնք մատերը գնելով  
*Sympphytum aspera*-ի վրա, պնդում էին, որ իսկական թորթը  
 դա է: Գոտնված տարբերությունը կարելի է ցույց տալ այստեղ  
 առանց բուտանիկական խրթնաբանությունների գիմելու. *Symp-  
 phythum*-ի ցողունների և տերեների մազուկենությունը զգալի  
 է շոշափելով, իսկ *Anchusa*-ինը տեսանելի է աչքով. *Sympphytum*-ի  
 տերեւակոթերը մասնակի չափով կամած և պառկած հն ցո-  
 ղունի վրա, իսկ *Anchusa*-ինը՝ ոչ, ծաղիկների գույնը (կապույտ  
 կամ մանուշակագույն) թեև նույնն է, բայց *Sympphytum*-ի  
 ծաղիկի ձեր զանգածեւ է, իսկ *Anchusa*-ինը՝ ձագարածեւ:

Հետաքրքիր է մեզ անհայտ մի բանասերի մեկնաբանու-  
 թյունը թորթի մասին: Վերջինիս կարծիքով թորթը *Origanum*-ն  
 է (անս Հայ. բացատրական բառարան. Ա. Մալխասյանի): Այս  
 սխալը, իմ կարծիքով, առաջացել է երկու տարբեր ժողովուրդ-  
 ների միևնույն առասպելը պատմելուց: Արխտուաելը պատմու-  
 է, որ Վերիաները օճի միսը ուտելուց հետ օրիգան հն ուտում,  
 ապա թե ոչ իսկույն կմեռնեն (H. Leclerc. Phytotherapie).  
 Նույն առասպելը հայ բանահավաքը լսած պետք է լինի մշեցի-  
 ների մեջ, որոնցից ես ևս լսել եմ կրիայի (ըստ ումանց ողնու)  
 մասին, իրենց գիտցած թորթի հակաթույն հատկության կա-  
 պակցությամբ: Մեկ խոսքով, պիտի ասեմ որ կրիայի (կամ ող-  
 նու) կերածը հույների մոտ ուրիշ խոտ է, հայերի մոտ ուրիշ:

### ԾԱԹՐԻՆ ԵՎ ՈՒՐՑ

Բժշկաբաններում և հավասարապես հայ ժողովրդի առօրյա  
 գործածության մեջ տարբեր հասկացողություն կա ծաթրինի և  
 ուրցի մասին: Բանահավաքներից մեկը շատ հեռու է զնում  
 ծաթրինի որոշման նկատմամբ: Նա, լսած լինելով Կ. Պոլսի փո-

զոցներում վայրի ծաթրին ծախող հույն գյուղացիների բիդանի՝ կանչելը, համոզված՝ պնդել է, թե հայոց ծաթրինը Origani—օրիգանն է (հնչմանը՝ նման): Անորոշ հասկացողության զլիավոր պատճառը մեր ժողովրդական բազմաթիվ գավառութարքառային հոմանիշներն են եղել, ինչպես հին ժամանակներում, նույնպես էլ հիմա: Կասկածի պատճառներից մեկն էլ, չսայած մորֆոլոգիական մեծ տարրերության, եղել է նրանց հոտի ու համի նույնությունը և կերակրերի մեջ գործածության նույնաձևությունը: Խնդիրը դասնում է բուսաբանական կոչումով երկու տարրեր բույսերի շրջը:

1) Satureja hortensis մեր երկրի և Satureja montana արևմտյան երկրների, սրան հոմանիշ ունենք Սահիար (ըստ բժշկաբանների) նման՝ արաբերեն սարիրե, լատիներեն սատուեյա բառին: Ծաթրին, Ծեթրոն, Ծոթրան, Զաթրին, Զամբուռ, Մարդա, Ռահան մարդա, Կորդյուն, Կոնտար նույնպես հոմանիշներ են:

2) Thymus-ի որևէ մի տեսակը, զլիավորապես Thymus vulgaris-ը, բազմամյա կարճ թփիկներ են, և կոչում են ուրց կամ խոռու: Ծաթրինը ոչ միայն վայրի է, այլև մշակվում է ամեն երկրում, իսկ ուրցը կամ խոռու չի մշակվում:

Հայկական յուրաքանչյուր գավառաբարբառային շրջան անխախտ պահպանում է յուր հատուկ հոմանիշը, բացի Լենինականից, որտեղ լավում է այլազանություն, ինչպես օրինակ՝ Thymus-ը կոչում են փոքր ծերրոն. ոմանք Satureja-ին՝ Մսի խոտ, ոմանք նույն բույսին՝ դոչի խոտ:

### Մ Ա Տ Ի Տ Ե Ղ

Մատիտեղի ստուգաբանությունը հայտնի չէ, թվում է անհայտացած մի ժողովուրդից մեր լեզվում մնացած մի անուն է, բայց և հիշվում է վրացերեն բժշկաբաններում մատիրելա անունով: Հիշելով հանդերձ Մատիտեղ անունը, Ամիրտովլաթը և Մխիթար Հերացին հոմանիշ են ընթառմ Հովլացուան և հովլի գավազան անունները, որոնք թարգմանություններ են Ասայի բայի արաբերեն անունի: Մատիտեղ հորջորջմանը ես հանդիպել եմ Զինջերլու գյուղի վերաբնակիչների մեջ, որոնք այդ անունը տալիս էին մի աղցանի, որը Polygonum alpestre-ն է, Մերժելով մի շարք լատիներեն լծորդումները, պիտի ճիշտ համարել Գ. Մենեվիշյանի որոշումը, այն է՝ Polygonum Bistorta, և իրոք սա մի մեծ Polygonum է, կարելի է անվանել մեծ մա-

տիտեղ: Շաղկացողունի վրա հավաքված են շատ փոքրիկ խիտ ծաղիկներ, որոնք ցուպիկի կամ գավազանի ձևն են ներկայացնում. արժատը բթամատի չափ հաստ, գլխատառ հայերեն Տտափի ձևն ունի, տերենները մի փոքր նման են ավելուկին, բայց երկու եղբերը գեպի կենտրոնը հակված: P. Bistorta-ի արժատը հայտնի է զեղադործության մեջ և հետաքրքիր է հարուստ յուրահատուկ տանինով:

Մանորուրյուն.—Կովկասի բուսաբանները Polygonum Carenum անվան տակ առանձնացնում են մի այլ տեսակ մեծ մատիտեղ, որը սակայն ես դժվարանում եմ զանազաննել Polygonum Bistorta-ից, պրակտիկորեն ասած՝ երկուսն էլ կամ պիտի նույնացնել, կամ ընդունել իրը Bistorta-ի փոփոխակ, բոլոր գեպքերում ոչ առանձին տեսակ: Սովորական ֆարմոկոպկյան նույնաղիս նկատի չի առնում բուսաբանական աննշան տարրերությունները և պրեպարատները զասավորում է Bistorta անվան տակ:

### Ց Ա Ր Տ Ս Ա Ն Ի Ս Ա

Ամիբառովլաթ այս բույսին հոմանիշ է բերում թուրքերեն Ասլան այաղի և արաբերեն Քաֆըլ ասատ անունները, որոնք թարգմանվում են Առյօնծի ուժի: Բոլոր բանասերները ճիշտ չեն որոշել. Կ. Բասմաջյանն և Ալիշանը, ըստ Լ. Լեկլերկի՝ թարգմանվում են Գրանարեն Leontopetalon (ըստ իս' լատիներենը Caulophion). այսաեղ նա միայն leo=առյօն բառի մեջ ճշմարտամերձ է, իրականում Leontopetalon այլ բույս է և չի համապատասխանում մեր որոշմանը: Մենք ունենք հետեւյալ փաստերը ապացուցելու համար, որ Յարատանիսան, Ասլան այաղըն, Քաֆըլ ասատը Alchiemilla vulgaris խոտն է. Լենինականի կողմերը կոչում են «Եղիլի խոտ», ելնելով բույսի այն հատկություններից, որ ջրի մեջ թաթախելին» չի թրջվում: Շեմսեղին Սամի Alchemille Գրանսերեն բառի դիմաց դնում է Ասլան այաղի և Քաֆըլ ասատ, իսկ գոկտ. Մ. Ռեստեն (Հայ հեղինակ Խոտալիայում 1822 թ.) իտալերեն Piede di lione, գոկառը Հանրի Լեկլերկ ֆր. Pied de lion անունը, այս բոլորը ճիշտ են և նշանակում են առյօնծի ուժ և նրա բժշկական գործածությունը համընկնում է առկա ժողովը դրական գործածությանը. վերքերը չորացնող և արյուն կտրող միջոց է:

Այստեղ կարիք կա իրարից տարբեր երկու վերլուծում կատարել տռաջին՝ ուղղել բժշկագրքերի և նրանց հետևող զրչագրերի տառասխալները, որի հետևանքով Շահթարա բառը, որը թարգմանվում է արքայական կոստեմ, դառել է Շետարան, որը անկասկած այլ բույս է: Շահթարա՝ Fumaria-ն է: Ամիրտովլաթը, խելացի թարգմանել է ամծխոտ, ինչպես ուսւները ճամանակ:

Հիմա դառնանք այն հարցին, թե ինչ բան է Շետարանը: Ամիրտովլաթը ասում է, «Երզնկա Արքուղա ասեն»: զնորհիվ արտօլա կամ արքուղա արտասանությանը, որը լսեցինք Լենինականում և Թալինում, կարողացանք հաստատել, որ Շետարանը Plumbago europaea-ն է, հին լատինների Dentellaria: Ճիշտ է գրում Շեմսեղդին Սամին ֆրանս-թուրք բառարանում, Dentellaire ընդունելով Շերաբան: Սրա արմատը հոչակավոր ստույգ միջոց է քոսի դեմ, թե ըստ Ամիրտովլաթի և թե ըստ առկա ժողովրդական բժշկության:

Տպագիր «Անգիտաց անպէտի» խմբագիրը Շետարանը լծորդելով Lepidium-ի հետ, որը նշանակում է կոտեմ, ընկնում է մեծ սիսալի մեջ. այս մեծ սիսալը չի կարող արդարանալ այն փաստարկով, թե «Լ. Լեկլեբրկը այդպիսո և քարզմանել և այդպիսն էլ պետք իր ընդունել նիւտուա<sup>1</sup>: Խոստովանելով բաղմահմուտ ֆրանսիացու մեծ աշխատանքը և մեծ ծառայությունները արաբ բժըշկության ուսումնասիրության բնագավառում, այնուամենայնիվ հայ բանասերը պետք է, որ Ամիրտովլաթը բառիս նեղ իմաստով իրն էլ Բեյթարի թարգմանիչը չհամարելը. նա շատ տվյալներ է հավաքել հայ իրականություննից: Եթե լ. Լեկլեբրկը իր ձեռքի տակ ունենար Ամիրտովլաթի գրքերը և նրանց մեջ կարդացած լիներ, որ Շետարանը հայոց արտօղան է, ապա նա իսկույն կուղղեր Lepidium-ը և կզբեր Plumbago, իսկ այդ մենք իրավունք չունենք պահանջնելու մի ֆրանսիացուց, բայց իրավունք ունենք պահանջնելու հայ բանասերից, որը հավակնություն ունի անվավեր համարելու ամեն մի հայ ժողովրդական աղբյուր և վավերական է ընդունում իր ձեռքի տակ ունեցած մեկը, որի անունն նա չի հայտնել իր առաջաբանում:

<sup>1</sup> Դոկտ. Հանըի Լեկլեբրկը նոր գեմք է ֆրանս-բժշկական ակադեմիայի, ուստի չպետք է շփոթել իրն էլ Բեյթարի թարգմանիչ լ. Լեկլեբրկի հետ:

Մեր բանասերները և բառագրողները շրեշը լծորդում են Asphodelus albus-ի հետ իրոք, Ասֆողելուսը որոշ չափով նմանում է շրեշին, սակայն Դ. Ալիշան ավելի հեռանում է ձշմարտությունից, ընդուներպ այն Anthericum (այժմյան կոչումով Phalangium). Մեր իսկական շրեշը Eremerus spectabilis-ն է. Հիշված բոլոր բույսերը պատկանում են շուշանազգի ընտանիքին. Ասֆողելուսը և Անթրիլումը չեն ուսումն ոչ ելքոպայում, ոչ մեղ մոտ, և ոչ էլ պալարարմատներից կոչող փոշի (շրեշ) են պատրաստում, որպիսի գործածություն ունի մեր շրեշը.

Մ Ա Վ Ի Զ Ա Ճ

Ըստ Դ. Ալիշանի՝ արարերեն մաքուր արտասանությունը մյութեզեց է. սրա լատիներեն անունը ընդունվել է Delphinum Staphysagria, որը հիմնականում ճիշտ է, երբ հարցը վերաբերում է բույսի տարտծման և արտահանման վայրին. Սակայն իմ քննությունից պարզվեց, որ այն մագիզանը, որը վաճառվում է Պարսկաստանում և կիրառվում է մեր ժողովրդի մեջ ուղիւխուակամ որիթ օթուա անվան տակ, մի այլ համազոր գելֆինիումին է, որը բուսաբանական լեզվով կոչում է Delphinum linearilobum) (անվանադիրը՝ Busche, 1850 թ.): Վերջինս աճում է Հայաստանի լեռնային շրջաններում:

Զ Գ Ա Տ Ա Կ

Պարսկերեն, արարերեն և հայերեն թժկարաններում չկա սրա ծագումը, բուսաբանական անունը մնում է անորոշ, բայց Զքատակը հաճախ համարվում է մի «հրաշագործ» գեղաբույս: Սըա մասին վեճերն սկսում են մաղիի և իբն Սինայի ժամանակից, այսինքն՝ մեղանից հաղար տարի առաջ, ապա արժե մի փոքր ավելի մանրամասն խոսել այս բույսի «զարսանալի» թժկության և նրա հայտնաբերման մասին:

Ազրբեջանի լեռնային շրջաններում, նախքան սովորական կարգերի հաստատվելը, մեր աշխատանքի ժամանակաշրջանում համարվում էինք հիվանդների, որոնք տառապում էին decubito կոչված խոցերից, որը ոռուսերեն կոչվում է որոլեյեն, հայերեն նորակերտ բառով պառկելախոց: Հարկ չկա այսեղ բացատրել թե ինչից է գոյանում այդ խոցը, բայց ես չեմ մոռացել, որ այդ խոցին աղբբեջանցիները կոչում էին «չիլա յարտի», հայերը

«Հիլա խոց»: Այդ խոցի գեմ երբեմն գործ էին ածում իրենց անհայտ բաղադրությամբ մի ինչ որ մահամ, որի սասին ափսուանքով նշում էին, թե չեր ճարվում շրջակա գյուղերում:

Անցնենք այժմ նոր պատմության: 1945 թ. հուլիսին դեպի Միկոյանի շրջանը մեր գիտարշավը ծրագրելիս, Միկոյան, Օրթաքենդ և Մալիշկա գյուղերում գյուղացիների օգնությամբ ճարեցի այդ բույսի արմատը. նրա վերերկրյա մասերը հուլիսին չորստած և քայլայված էին: Նորաշենքի աղբբեջանցիները նրան Զլադաղի էին անվանում, իսկ հայերը՝ Զիլատակ: Այս բույսի արմատը կուպակտ մի զանգված է, կեղեք գորշ, իսկ միջուկը մաքուր սպիտակ. դանակով, թեկուզ չոր վիճակում, հեշտ է կտրել. հատվածի մակերեսը խոշորացույցով զննելիս երևում են բյուրեղյակետեր. զգալի հոտ չունի, փոշին փաշտացնող է, համը քաղցրավուն, մատով հպելիս զգալի է կպչունությունն: Ըստ իմ քաղած տեղեկությունների, գործածվում է բազմատեսակ համար վերքեր բուժելու համար, առանձնապես ուկրային փուլթյունը, իլ յարասին (ulcus orientalis), բարասիլը (haemorrhoides). Պետք է ասել, որ ինչ գրում են Ամերտովլաթը և նրա հետևող հեղինակները Զլատակի վերաբերյալ, նույնը լսվում է աղբբեջանցի և մեր հերեիմների ու դալլաքների մեջ: Դարերի ընթացքում խոսված իրադարձությունները իմանալու համար կարդում եմ Դ. Ալիշանի «Հայրուսակը» և Ամերտովլաթի «Անգիտաց անպէտը»: Հիշված իրադարձությունների միջից ես միայն մի կես եմ վերցնում. արաք բժիշկներն այս արմատի մասին ասել են, թե՛ և հայոց գայե: Իմ եղբակացությունը, որով ես կուղեի կապել չքատակը Ալադաղիի հետ, ենթադրություն չեմ համարում, այլ ճշմարտամուտ իրողություն, և ահա թե ինչու Զլադաղին պետք է զիշել Զիլատակին. Զլադաղը աղավաղումն է աղբեջանցիների բերանում, իսկ Զքատակը աղավաղվում հայ գրիչների: Արաբները և պարսիկները Զլատակը Հայաստանից որպես Դրոգ՝ (դեղանյութ) ընդունելիս նույնությամբ արձանագրել են Զլատակ, իսկ հայ գրագրիչները չկարողանալով ճիշտ կարդալ՝ Զլատակը կարդացել են Զքատակ: Վերջինիս արաբերեն և տառի վրա պատհամամբ մի խաղ ընկնելով՝ Զլատակը դարձել է Զքատակ: Իմ այս փաստարկումը ես հայտնել էի ժամանակին հանձնած հուլիսյան դիտարշավի հաշվետվության մեջ, իսկ ներկա աշխատանքս լրացնելու պահին Մատենադարանի պարսկերին ձեռագրերի աշխատակից ընկ. Ալի Շաբանովը հայտնեց, որ երկու պարսկերին ձեռագրեր

հարցի առարկա բույսի արմատը արծանագրում են Զիլատակ,  
(Բժշկական և 19. 1669թ. Միրզա Մուհամեդ Թենքյարի և և 464  
օրինակը, 1760 թ.)։ Այս հայտնաբերումով արդեն վերջ են զըտ-  
նում բոլոր կասկածանքներն ու ենթադրությունները։

Պարզ է, որ մեր բժշկագրերի զրած տակը մեր հասկացո-  
ղությամբ արմատ է. իսկ ինչ բան է Զիլե, որը կարելի է հնչել  
Չըլա, որ ըստ իս, պարսկերեն բառ է, թեև հաճախ գործածված  
արաբների կողմից, որ նշանակում է «երկարատև տառապանք»։  
Հենց ինքն Զիլայարա կամ չիլախոցը հետևանք է երկար ժա-  
մանակ անկողնում տառապելուն, կարճառոտ ասած՝ Զիլատակը  
պիտի հասկանալ «Զիլախոցը բուժող արմատ»։

Գալով բույսի բուտանիկական որոշմանը, ես այդ նպատա-  
կով հավաքեցի քայլայված բույսի մասերը և ի մի կցելով, հա-  
մեմատելով Բուտանիկական ինստիտուտի հերթարիումների հետ,  
համոզվեցի, որ բույսը շըթնազդի ընտանիքին պատկանող, սպի-  
տակածաղիկ երկար ու հաստ ճյուղավորումով, բազմամյա փար-  
թամ մի խոտաբույս է, կոչվում է Eremostachys.

Մեր լեռնային շրջանների ցամաք լանջերի վրա աճում  
են մի քանի տեսակ իրարից աննշան տարբերություն ունեցող  
էրեմոստախիսներ, որոնցից շատ է հանդիպում Eremostachys  
Tournefortii (անլանազիրներ՝ Jeuber et Spach.)։

### Վ Բ Ա Ց Ի Կ Ո Ճ Ը Ե Վ Զ Ի Գ Տ Ա Մ Ը Ը

«Վրացի կոճի» պարզաբանման վերաբերյալ ունենք հատուկ  
մոնողքաֆիխ՝ «Ինչպիսի» բույս և Վրացի կոնք վերնագրով։ Ներ-  
կա հոգվածում կարող ենք միայն հակիրճ կերպով ասելայն, ինչ  
վերաբերում է Վրացի կոնքին և զուգահեռ Զիգումին։ Զիգումիը  
և սրա հոմանիշ Սապոտուկը, որը հիշատակում է Դավիթ Սալա-  
ձորցին, արտաքինով մեր ձնծաղիկին նմանող մի խոտաբույս է,  
հիրեկների ընտանիքից, ավելի մոտիկ խոսած՝ շափրանների  
խմբի մեջ է մտնում. արևելյան բուսաբանությունը ցուցակազրում  
է Crocus Adami անվան տակ. կաղնի մեծության սրա սոխա-  
նման համեղ արժատը ուտվում է, Գ. Մենեվիշյանը իր «Բուսա-  
բանության» մեջ Զիգումիը լծորդում է Veratrum-ի հետ, այնինչ  
Veratrum-ը բժշկաբանների սպիտակ վրացի կոնք է, մեր տեղա-  
կան բնակիչներին ծանոթ Ղաթամերը, Զամուշ դըրանը (զոմեշ  
սպանող), Թեչի Քյուփյուրթգենը (այծերի բերանը փրփրացնող՝  
թունավորման ժամանակ), Վատահելով Գ. Մենեվիշյանի որոշ-

մանը, պրոֆ. Հ. Բեղելյանը Զիգտամը նույնությամբ ընդունում է Veratrum (Բույսերի սիստեմատիկա, էջ 234), ահա մւը է հանգում փոխանցիկ սխալների վերջակետը:

\* \*

Այս աշխատությանս նպատակն է ընդհանուր գծերով տալ մի քանի օրինակ որոշված կամ անծանոթ մնացած բույսերի վերաբերյալ: Այս աշխատանքը կարճ ժամանակի գործ չէ: Նա երկարատև ջանք ու հետազոտություն է պահանջում, և գիտական պահանջի նվազագույնին հասնելը, անկասկած, կնպաստի շահագրգուված մարդկանց խուսափել մոլորութերից, պատմական գեղաբույերով հետաքրքրվելիս կամ կիրարկելիս:

А. О. СЕПЕТЧЯН

### К ВОПРОСУ О ПРОВЕРКЕ СПОРНЫХ НАЗВАНИЙ РАСТЕНИЙ, УПОМЯНУТЫХ В ДРЕВНИХ АРМЯНСКИХ ВРАЧЕБНЫХ КНИГАХ

Прежние толкователи древних армянских рукописей допустили много ошибок при уточнении упоминавшихся в этих рукописях армянских названий различных лекарственных растений. Автор поставил своей целью разобраться в существующей в этом вопросе терминологической путанице и внести в него некоторую ясность.

Просмотрев доступные ему рукописные материалы в Матенадаране, сличив между собой различные литературные источники, различные наименования лекарственных растений на тех или других языках, и прибегнув также к опросу населения различных районов Армении об этих названиях, автор сумел уточнить названия целого ряда растений и внести тем в рассматриваемый вопрос определенный порядок.

